Արձանագրություն N 2

Նոր Եդեսիայի համայնքապետարան-ի կարիքների համար «ՀՀԱՄ-ՆԵՀ-ԳՀԱՇՁԲ -21/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի մասին

Գ. Նոր Եդեսիա «06» հուլիսի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝ Վահան Հայրապետյան - աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝

Կամո Աղաբեկյան - ավագանի
Միսակ Մկրտչյան – հանրային խորհրդի անդամ
Շիրակ Հակոբյան - ավագանի

Գնումները համակարգող՝ Օ. Սուքիասյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1.Գնման աշխատանքների նախահաշվայի գինը

ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Եդեսիայի համայնքապետարան-ի կարիքների համար հայտարարված ՀՀԱՄ-ՆԵՀ-ԳՀԱՇՁԲ -21/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է

ՀՀ դրամ

1	***Նոր Եդեսիա համայնքի ջրապարի վերակառուցման աշխատանքներ***	44569,32

2. Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Եդեսիայի համայնքապետարան-ի կարիքների համար կազմակերպված ՀՀԱՄ-ՆԵՀ-ԳՀԱՇՁԲ -21/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը և էլեկտրոնային հասցեն
«Սեթշին» ՍՊԸ	Ք. Երևան, Հասրաթյան 9/3, setshin2020@mail.ru, ՀՎՀՀ 05017429
«Եդեմ Գրուպ» ՍՊԸ	ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Նոր Եդեսիա, 2-րդ փ., 18 տուն, edemgroupllc@gmail.com, ՀՎՀՀ 05024775
«Մեդիսոն էյբլ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Ա. Ահարոնյան 5շ., բն. 43, medison-eybl@mail.ru, ՀՎՀՀ 01012522
«Ստրոի Գրուպ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Զավարյան 29/25, ani-hakobyan-95@list.ru, ՀՎՀՀ 01295247
«Վայք գրուպ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Էստոնական փ. 9, բն. 28, vaykgroup@mail.ru, ՀՎՀՀ 01287895
«Գրինսան» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Երևանյան 11 շենք, բն. 8, grinsun@inbox.ru, ՀՎՀՀ 04231761

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- «Եդեմ Գրուպ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիան,
- «Ստրոի Գրուպ» ՍՊԸ- ի հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիան,
- «Վայք գրուպ» ՍՊԸ- ի հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիան և ծավալաթերթը,

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ՝ հետևյալ դեպքերի.

Սեթշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի Հավելված 2-ում/գնային առաջարկ/ աղյուսակի արժեքը սյունակում նշվել է **30307087**, ԱԱՀ-ի սյունակում՝ **6061420**, ընդհանուր գինը սյունակում՝ **36368500**:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետև Կարգ/ 32-րդ կետի 2) ենթակետի մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

«Սեթշին» ՍՊԸ -ի կողմից ներկայացված գնային առաջարկի ԱԱՀ-ի վճարվելիք գումարի չափը սխալ է հաշվարկված, քանի որ.

-Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի /այսուհետև Օրենսգիրք/ 39-րդ հոդվածի՝ աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, եթե՝

1) կատարվող աշխատանքները և (կամ) մատուցվող ծառայությունները անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կամ կառուցվող կամ կառուցվելիք անշարժ գույքի հետ: Սույն կետում նշված աշխատանքներին և (կամ) ծառայություններին մասնավորապես վերաբերում են՝

ա. շինարարության նախապատրաստման և իրականացման (ներառյալ՝ հետախուզման, նախագծման, դիզայներական, մոնտաժային, հեղինակային և տեխնիկական վերահսկողության) աշխատանքները և ծառայությունները,

բ. անշարժ գույքի նորոգման, վերականգնման և կանաչապատման աշխատանքները և ծառայությունները,

գ. անշարժ գույքի առք ու վաճառքի գործակալների ու փորձագետների կողմից կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները (ներառյալ՝ անշարժ գույքի գնահատման ծառայությունները),

դ. անշարժ գույքը վարձակալության (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ օգտագործման տրամադրելու ծառայությունները.

-Օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-ին մասի 2) կետի համաձայն ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում աշխատանքի կատարումը, եթե աշխատանքի կատարման վայրը, Օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը.

-Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

«Սեթշին» ՍՊԸ -ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին քանի որ.

Համաձայն ընթացակարգի հրավերի Հավելված 2-ի /գնային առաջարկ/, մասնակիցը աղյուսակի 3-րդ /արժեքը/ սյունակում լրացնում է գնվելիք աշխատանքի ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը, 4-րդ սյունակում՝ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը, իսկ 5-րդ /Ընդհանուր գինը/ սյունակում լրացնում է 3-րդ և 4-րդ սյունակների հանրագումարը, սակայն մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի աղյուսակի Ընդհանուր գինը սյունակում նշված գումարը չի համապատասխանում Արժեքը և ԱԱՀ սյունակներում նշված գումարների իրական /ճիշտ/ հանրագումարին:

Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4) ենթակետի պահանջները /հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան/ «ՀՀԱՄ-ՆԵՀ-ԳՀԱՇՁԲ -21/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց **«Սեթշին» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Մասնակցի անվանումը	հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը
«Սեթշին» ՍՊԸ	հրավերով սահմանված պահանջներին համապատասխան չէ
«Եղեմ Գրուպ» ՍՊԸ	հրավերով սահմանված պահանջներին համապատասխանում է
«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ	հրավերով սահմանված պահանջներին համապատասխանում է
«Ստրոի Գրուպ» ՍՊԸ	հրավերով սահմանված պահանջներին համապատասխանում է
«Վայք գրուպ» ՍՊԸ	հրավերով սահմանված պահանջներին համապատասխանում է
«Գրինսան» ՍՊԸ	հրավերով սահմանված պահանջներին համապատասխանում է

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Չ/Հ	Չ/Հ
«Սեթշին» ՍՊԸ	30307087	36368500
«Եղեմ Գրուպ» ՍՊԸ	33005694	39606832,8
«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ	36456800	43748160

«Ստորի Գրուպ» ՍՊԸ	37133367	44560040
«Վայք գրուպ» ՍՊԸ	37142000	44570400
«Գրինսան» ՍՊԸ	42000000	42000000

6. Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:
Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

7. Չկայացած չափաբաժինների վերաբերյալ:
(-) չափաբաժինները չեն նայացել :
Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

8. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

8.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին մասի և ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526 – Ն որոշման 1 հավելվածի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա) մասի համաձայն մասնակիցներին հրավիրել ենք բանակցությունների:

8.2 Բանակցությունները և հաջորդ նիստը տեղի կունենա ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Եդեսիայի համայնքապետարանում՝ 12.07.2021թ., ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Վահան Հայրապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Կամո Աղաբեկյան

_____ Միսակ Մկրտչյան

_____ Շիրակ Հակոբյան

Գնումները համակարգող՝ _____ Օ. Սուքիասյան